

ՋԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԳԼԽԱՎՈՐ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Անուշ Սուճբատյան

*ԵՊՀ պետության և իրավունքի տեսության
ու պատմության ամբիոնի հայցորդ*

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, ամրագրելով կառավարման խորհրդարանական ձևը, էական վերակառուցման ենթարկեց զինված ուժերի բարձրագույն կառավարման համակարգը, ներառյալ՝ զինված ուժերի գլխավոր հրամանատարի ինստիտուտը: Վերջինիս առանձնահատկությունները գիտագործնական չափանիշներով համալիր պարզելու նկատառումով նպատակահարմար ենք համարում վեր հանել խորհրդարանական հանրապետության կառավարման ձև ունեցող Հայաստանի առաջին Հանրապետությունում համանման հարաբերությունների իրավական կարգավորման փորձը և այն դիտարկել իրավահամեմատական մեթոդաբանությամբ:

Նորագույն ժամանակաշրջանի պետություններում պաշտպանական ոլորտի բարձրագույն ռազմավարական կառավարումը համապատասխանեցվում է իշխանությունների բաժանման սկզբունքին: Դրան համահունչ՝ պաշտպանական ոլորտի կառավարման լիազորությունները բաշխվում են օրենսդիր ու գործադիր մարմինների միջև: Ռազմական կառավարման տեսության պահանջներից բխող արագության ու օպերատիվության սկզբունքների երաշխավորման իրավական կառուցակարգային միջոցը զինված ուժերի գլխավոր (բարձրագույն) հրամանատարի պաշտոնն է: Գլխավոր հրամանատարը՝ որպես միանձնյա և բարձրագույն պաշտոնատար անձ, մարմնավորում է ռազմական ստրատեգիայի ու տակտիկայի քաղադրիչների հիմնական մասի՝ ընդհանուր պետական կառավարման համակարգում կենսագործման կառուցակարգը: Նման հիմնարար լուծումը դրված է արդի սահմանադրություններով ամրագրված ինչպես երկրի ընդհանուր պետական կառավարման, այնպես էլ պաշտպանական ոլորտի կառավարման հիմքում: Սակայն այս հիմնարար մոտեցումը, լինելով միասնական ազատական տիպի բոլոր պետությունների, ներառյալ հանրապետությունների համար, ձեռք է բերում առանձնահատկություններ՝ պայմանավարված մի շարք գործոններով, որոնցից առաջնայինը կոնկրետ երկրի սահմանադրությամբ ամրագրված պետական կառավարման ձևն է:

ՀՀ Սահմանադրությունը, 2015 թ. փոփոխություններով, որդեգրելով խորհրդարանական պետական կառավարման ձևը, սահմանել է զինված ուժերի պետական կառավարման հետևյալ կարգը, պաշտպանության քաղաքականությունն իրականացնում է կառավարությունը¹, իսկ պաշտպանական քաղաքականությ-

¹ «Պաշտպանության մասին» 2017 թ. դեկտեմբերի 15-ի ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ «Պաշտպանական քաղաքականությունը՝ ՀՀ պաշտպանության ապահովման գերակայությունների սահմանումն ու իրականացումն է, այդ թվում պաշտպանության ռազմավարական պլանավորման և պաշտպանության ռազմավարական վերանայման, ռազմավարական առաջնորդող փաստաթղթերի ընդունման միջոցով» /տե՛ս ՀՀ ՊՏ 2017.12.06.173 (1348):

յան հիմնական ուղղությունները սահմանում է Անվտանգության խորհուրդը¹, որը գլխավորում է վարչապետը²: Կառավարությունը Սահմանադրությամբ օժտված է պաշտպանական ոլորտի կառավարման մի շարք լիազորություններով, մասնավորապես՝ հայտարարում է ռազմական դրություն, ընդհանուր կամ մասնակի զորահավաք. որոշում է ընդունում զինված ուժերի կիրառման մասին. Ազգային ժողովին առաջարկություն է ներկայացնում պատերազմ հայտարարելու մասին, իսկ Ազգային ժողովի նիստ գումարելու անհնարինության դեպքում³ լուծում է պատերազմ հայտարարելու հարցը և այլն: «Պաշտպանության մասին» օրենքի համաձայն Հանրապետությանն սպառնացող անմիջական վտանգի և (կամ) զինված հարձակման դեպքում վարչապետը հրավիրում է Անվտանգության խորհրդի նիստ. քննարկում է պետությունն անհրաժեշտ պատրաստականության աստիճանների բերելու, ռազմական դրություն կամ պատերազմ հայտարարելու, զինված ուժերի կիրառման պլանը գործողության դնելու, ընդհանուր կամ մասնակի զորահավաք հայտարարելու նպատակահարմարության հետ կապված հարցերը. կառավարության կողմից զինված ուժերի կիրառման մասին որոշում կայացնելու անհնարինության դեպքում պաշտպանության նախարարի առաջարկությամբ կայացնում է որոշում զինված ուժերի կիրառման պլանը գործողության մեջ դնելու մասին՝ այդ մասին անհապաղ տեղեկացնելով կառավարության անդամներին. միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում և կարգով իրավիճակի մասին իրազեկում է դաշնակից և գործընկեր պետություններին. իրականացնում է սպառնալից իրավիճակից բխող այլ անհրաժեշտ գործողություններ:

Պատերազմի ժամանակ, համաձայն ՀՀ Սահմանադրության 155-րդ հոդվածի 4-րդ մասի, զինված ուժերի գերագույն հրամանատարը վարչապետն է: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ոչ պատերազմական ժամանակ գլխավոր շտաբի պետը ենթակա է պաշտպանության նախարարին³: Սահմանադրական այս դրույթներն առաջ են բերում իրավական անորոշություններ, որոնք կարող են առաջացնել զինված ուժերի կառավարման բարդություններ, մասնավորապես՝ դրանցում ուղղակիորեն չի կարգավորված և դրանցից չենք կարող տրամաբանորեն բխեցնել այնպիսի հարցադրումների պատասխանները, ինչպիսիք են՝ ո՞վ է կատարում զինված ուժերի հրամանատարի կամ գերագույն հրամանատարի գործառույթները ոչ պատերազմական ժամանակ, ու՞մ է ենթարկվում գլխավոր շտաբի պետը պատերազմական ժամանակ:

Երկրի պաշտպանության ոլորտում խորհրդարանը՝ Ազգային ժողովը, բացի ընդհանուր լիազորություններից՝ օրենսդրական կարգավորման և խորհրդարանական վերահսկողության իրականացումից, օժտված է հատուկ լիազորություններով,

¹ Անվտանգության խորհրդի ձևավորման ու գործառույթավորման կարգերը սահմանված են 2018 թ. մարտի 1-ին ընդունված «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» ՀՀ օրենքով (Տե՛ս ՀՀ ՊՏ 2018.03.21/20 (1378), հոդված 311, ՀՕ-145-ն):

² Տեսական գրականության մեջ պաշտպանական քաղաքականությունը բնութագրում են նաև որպես պետության գործունեություն, որն ուղղված է երկրի արտաքին հարձակումներից պաշտպանությանը, որը ներառում է ժողովրդին և զինված ուժերին ագրեսիային հակահարված տալուն պատրաստելուն, ինչպես նաև տնտեսությունը, առողջապահությունը, տեղեկույթը, կրթությունն ու դաստիարակությունը և այլ ոլորտները դրան նախապատրաստելուն (Տե՛ս **Халипов В.Ф.**, Энциклопедия власти. М.: Академический Проект; Культура, 2005. էջ 248-250): Արդի պետություններում պաշտպանական քաղաքականության հիմնական տարրերն ամրագրվում են ռազմական դիկտրիններում (Տե՛ս Военное право, под ред д.ю.н., професора В.Г. Стрекозова, д.ю.н. А.В. Кудашкина. Серия “Право в вооруженных силах – консультант” – М., “За права военнослужащих”, 2004, էջ 23-25):

³ Ռազմական իրավունքի տեսության մեջ Գլխավոր շտաբը համարվում է զինված ուժերի օպերատիվ կառավարման հիմնական մարմինը, որի կառուցվածքը, գործառույթները և գործունեության կարգը սահմանվում են օրենքով (Տե՛ս **Мигачев Ю.И., Тихомиров С.В.**, Военное право. М.: ООО изд-во «Юрлитинформ», 2002, էջ 60):

մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 118 հոդ., 1-ին մասի, 116 հոդ. 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ կառավարության առաջարկությամբ ընդունում է պատերազմ հայտարարելու (կամ) խաղաղություն հաստատելու մասին որոշումներ, օրենքով սահմանված կարգով վավերացնում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում այն միջազգային պայմանագրերը, որոնք ունեն ռազմական բնույթ:

Պաշտպանական հարաբերությունների ոլորտում Հանրապետության նախագահի լիազորությունների վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ նա պաշտպանության ոլորտում էական դերակատարություն չունի:

Այսպիսով, խորհրդարանական հանրապետության կառավարման ձևով պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետության գործող Սահմանադրությամբ պաշտպանական ոլորտի կառավարումն ըստ էության կառավարակենտրոն է, քանզի ոլորտի պետական կառավարման կարևոր լիազորությունները կենտրոնացված են կառավարությունում: Մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության վարչապետը գլխավորում է պաշտպանական քաղաքականության հիմնական ուղղությունները սահմանող Անվտանգության խորհուրդը, իսկ Հանրապետությանը սպառնացող անմիջական վտանգի և (կամ) զինված հարձակման դեպքում ունի զինված ուժերի գործադրման լիազորություններ:

Պաշտպանական ոլորտի ռազմաստրատեգիական կառավարման այս նկարագիրը ընդհանուր գծերով ներկայացնելուց հետո անցնենք խորհրդարանական կառավարման ձև ունեցող Առաջին Հանրապետության համապատասխան կառուցակարգերի քննությանը: Հայաստանի առաջին հանրապետության պետական մարմինների իրավասությունը երկրի պաշտպանության բարձրագույն ռազմավարական կառավարման ոլորտում չունեի օրենսդրական հստակ կարգավորում: Ռազմաստրատեգիական կառավարման ոլորտում օրենսդիր և գործադիր մարմինների լիազորությունները համակարգված կարող ենք վեր հանել բանակաշինության փորձի հետազոտմամբ:

Ընդհանրապես պատերազմ հայտարարելու, հաշտություն կնքելու ուղղությամբ գործողություններ իրականացնելու և հարակից մի շարք իշխանական լիազորությունների (ռազմական դրություն հայտարարելը, ռազմադաշտային դատարանների գործունեության թույլտվությունը) վերաբաշխումն օրենսդիր և գործադիր իշխանությունների մարմինների միջև կախված է պետական կառավարման ձևից: Դասական խորհրդարանական հանրապետություններում նշված լիազորություններով օժտված են գործադիր իշխանության մարմինները: Առաջին հանրապետությունում այս հարցերի իրավական կարգավորումը կատարվում էր Ռուսաստանի և՛ կայսերական, և՛ ժամանակավոր կառավարության օրենսդրության հիման վրա: Հանրապետությունում խորհրդարանի ու կառավարության իրավասությունը տվյալ ոլորտում սահմանազատող որևէ օրենք չի ընդունվել: Հանրապետության օրենսդիր և բարձրագույն գործադիր մարմինների գործունեության ուսումնասիրումը ցույց է տալիս, որ գործադիր իշխանությունն ի սկզբանե այդ իրավունքները վերապահել էր իրեն, սակայն նկատվում էր հետևյալ միտումը. խորհրդարանն աստիճանաբար իրեն էր վերապահում նշված լիազորություններից առավել էականները:

1918 թ. հայ-վրացական և 1920 թ. հայ-թուրքական պատերազմների ընթացքի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ ռազմական դրությունը հայտարարելու իրավունքն Առաջին հանրապետությունում պատկանում էր խորհրդարանին, որը կարող էր նաև վերացնել այն: Սակայն ռազմական դրությունը, որ հայտարարված էր խորհրդարանի կողմից, փաստական հիմքերի չեզոքացման պայմաններում կարող էր վերացվել կառավարության կողմից: Ռազմադաշտային դատարաններ հիմնելու թույլտվությունը արտոնում էր Հայաստանի Առաջին Հանրապետության կառավարությունը:

Կառավարությունը քաղաքական պատասխանատվություն էր կրում երկրի պաշտպանության համար և ղեկավարում էր բանակային շինարարությունը: Ամեն

մի նոր ձևավորվող կառավարություն իր ծրագրով հռչակում էր երկրի պաշտպանության իր քաղաքական ծրագիրը, որը ներառում էր զինված ուժերի կազմակերպման, վերակառուցման, այլ միջոցառումների իրականացումը: Օրինակ՝ առաջին կառավարության 1918 թ. օգոստոսի 7-ին հաստատված հայտարարագիրը «զինվորական զործերի» վերաբերյալ սահմանում էր. «Վերակազմել երկրի զինվորական ուժերը՝ նպատակ ունենալով ստեղծել թվով ոչ մեծ, բայց ոգով ու կարգապահությամբ ուժեղ բանակ»¹: 1919 թ. օգոստոսին ձևավորված կառավարության հայտարարագրում ևս կային երկրի պաշտպանության և զինված ուժերի մասին ծրագրային հատվածներ. «Երկիրը արտաքին թշնամուց պաշտպանելու գործը պիտի հենվի պարտադիր և ընդհանուր զինվորական ծառայության վրա: Որոշ տարիքից սկսած պիտի հիմնել պահակազորք: Ժողովրդական միլիցիա մշտական զորքի փոխարեն: Բանակը պետք է ազգայնացվի: Միջոցներ պետք է ձեռք առնվեն զորանոցների, զորքի և առողջապահական պայմանների համար»²:

Հայաստանի Առաջին Հանրապետությունում զորացրման կամ զորահավաքի լիազորությունը պատկանել է ոչ թե զործադիր, այլ օրենսդիր իշխանությանը՝ համապատասխան օրենքներ ընդունելու միջոցով³: Օրինակ՝ Հայաստանի խորհուրդը 1918 թ. հոկտեմբերի 26-ին ընդունել է «Միջնակարգ դպրոցների աշակերտների զինվորական պարտադիր ծառայությունը հետաձգելու մասին» օրենքը, որով գորակոչի ենթարկված այդ խմբի անձանց իրավունք էր տրվում ժամանակավորապես ազատվելու զինվորական ծառայությունից: 1919 թ. հունվարի 17-ի «ՀՀ բանակի մասնակի զորացրման մասին» օրենքով զինվորական իսկական ծառայության մեջ թողնվեցին միայն 20-25 տարեկան քաղաքացիները⁴:

Կառավարությունը ռազմական նախարարի միջոցով իրականացնում էր բանակային շինարարության ընդհանուր ղեկավարությունը, այդ թվում նաև բանակի ծառայական հրամանակազմի ընդհանուր կառավարումը: Այսպես՝ 1918 թ. դեկտեմբերի 25-ին Հայաստանի խորհուրդն ընդունեց «Աստիճանաբաշխման մասին Հայաստանի Հանրապետության զինվորական վարչության մեջ» օրենքը, որով սահմանվեց՝ զինվորական ծառայության մեջ ժամանակավորապես պահպանվում են ռուսական բանակում եղած սպայական և դասային աստիճանները: Աստիճանաբաշխման լիազորությունը պատկանում էր կառավարությանը՝ զինվորական նախարարի առաջարկով⁵:

Հայաստանի անկախության հռչակման պահին զորքը կազմված էր առանձին հայկական կորպուսից և կորպուսի իրավունքներով հատուկ ջոկատից: Ջորքերի ընդհանուր հրամանատարությունն իրականացնում էր հայկական կորպուսի հրամանատարը, որն իր լիազորություններն ստացել էր Թիֆլիսի հայոց ազգային խորհրդից⁶: 1918 թ. հուլիսի 5-ին ռազմական նախարարի պաշտոնակատար գեներալ-մայոր Հախվերդյանի հրամանով սահմանվեցին նախարարության կառուցվածքը և հաստիքները⁷: Համաձայն այդ հրամանի՝ նախարարությունը կազմված էր նախարարից և նրան կից ռազմական շտաբից, մի շարք վարչություններից⁸: Ջորքերի կառավարումը մնացած բոլոր առումներով իրականացնում էր Առանձին հայկական կորպուսի հրամանատարը, որն օժտված էր նաև գլխավոր հրամա-

¹ Տե՛ս Հայաստանի կառավարության 1918 թ. օգոստոսի դեկլարացիան (Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., Հայաստան, 1993, էջ 196):

² Տե՛ս Հայաստանի աշխատավոր, թերթ, 1919, թիվ 121, օգոստոս: Կառավարության դեկլարացիան:

³ Տե՛ս Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները, 1918, հոդվ. 30, էջ 18-19:

⁴ Տե՛ս Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները, 1919, հոդվ. 76, էջ 46-47:

⁵ Տե՛ս Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները, 1918, հոդվ., 57, էջ 32-33:

⁶ Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 296, ց. 1, գ. 79, թ. 46:

⁷ Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 40, թ. 8:

⁸ Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 40, թ. 8:

նատարի իրավունքներով¹: Երբ Թիֆլիսում ձևավորված կառավարությունը տեղափոխվեց Երևան, ձեռնարկվեցին զորքերի վերակառուցման նոր միջաջառույցներ: Հուլիսի 26-ին Հայկական կորպուսի հրամանատարի հրամանով իրականացվեց զորքերի նոր վերակազմավորում: Առանձին հայկական կորպուսը վերակառուցվեց Առանձին հայկական դիվիզիայի՝ դրա հրամանատարի գլխավարությամբ²: Ռազմական նախարարության 1918 թ. օգոստոսի 15-ի հրամանով հայկական առանձին դիվիզիան ուղղակիորեն ենթարկվում էր ռազմական նախարարին³:

Ձինված ուժերի և դրա կառավարման նոր՝ արմատական վերակառուցում իրականացվեց ռազմական նախարարի 1919 թ. հունվարի 12-ի և ապրիլի 4-ի հրամաններով: Հայկական դիվիզիան վերակառուցվեց երեք բրիգադի՝ յուրաքանչյուրում երեք գունդ⁴: Ռազմական նախարարը նախարարության իրավասության մեջ մտնող կառավարման բոլոր ոլորտների գլխավոր ղեկավարն էր, որին անմիջապես ենթարկվում էին զորքերի հրամանատարը, գլխավոր շտաբի պետը, զինվորական դատարանը և զինվորական վերահսկիչը: Ձորքերի հրամանատարին ենթարկվում էին բանակի մարտական բոլոր միավորները⁵: Բանակի զորահրամանատարին կամ զորքերի հրամանատարին էին ենթարկվում նաև գլխավոր շտաբի պետը և ռազմական նախարարության ինտենդանտը, հրանոթային, ռազմատեխնիկական, ռազմասանիտարական, ռազմասանաբուժական վարչությունները: Խաղաղ ժամանակաշրջանում գլխավոր շտաբի գործառույթն էր նախապատրաստել երկիրը պաշտպանության և մշակել ռազմական օպերացիաները: Պատերազմական ժամանակաշրջանում գլխավոր շտաբը վերածվում էր բանակի (զորքերի) հրամանատարի շտաբի⁶: Այսպիսով 1919 թ. ապրիլին բանակում իրականացված վերակառուցումների արդյունքում ստեղծվեցին Հայաստանի զորքերի հրամանատարի պաշտոնը և զինվորական խորհուրդը՝ կազմված երեք անդամից՝ նախագահ, որն ի պաշտոնե զորքերի հրամանատարն էր:

Ռազմական կառավարման այս համակարգն իր հիմնական գծերով պահպանվեց մինչև Հանրապետության անկումը: 1920 թ. ամռան այն ուներ կազմակերպական հետևյալ կառուցվածքը՝ ռազմական նախարար, գլխավոր շտաբ, զորքերի հրամանատարի շտաբ, հրանոթային, ռազմաինժեներական, համբարակային, ռազմասանիտարական, ռազմասանաբուժական գլխավոր վարչությունները, զինվորական վերահսկիչի վարչությունը: Նախարարության կենտրոնական ապարատում գործում էին նաև գլխավոր զինվորական դատարանը և ռազմադատախազական հսկողությունը: Ձինված ուժերի հաջորդ կառուցվածքային օղակներն էին մարտական և սպասարկող զորամիավորումները, ինչպես նաև ուսումնական միավորները:

Այսպիսով, Առաջին հանրապետության ռազմաստրատեգիական կառավարման համակարգի վերը ներկայացված պատկերում նկատվում է դրա հավասարակշռված բաժանումը խորհրդարանի և կառավարության միջև, զինված ուժերի գլխավոր հրամանատարի ինստիտուտի կենտրոնացումը ռազմական գերատեսչության համակարգում՝ որպես այդպիսին համարելով արհեստավարժ զինվորականներից նշանակված հատուկ պաշտոնյայի՝ հայկական զորքերի հրամանատարին: Պաշտպանության կառավարման բոլոր ոլորտների գլխավոր ղեկավարը ռազմական նախարարն էր, որին անմիջապես ենթարկվում էր նաև զորքերի հրամանա-

¹ Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 276, գ. 79, թ. 46:

² Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 204, գ. 1, գ. 47, թ. 2:

³ Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 204, գ. 1, գ. 42., թ. 18:

⁴ Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 201, գ. 2, գ. 109, թթ. 43, 81:

⁵ Այդ մարտական միավորներն էին՝ թվով 3 հետևակային բրիգադ՝ իրենց հրանոթային զորամասերով, հեծելազորային բրիգադը, ինժեներական վաշտը, ռադիոտեխնիկական բաժինը:

⁶ Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 201, գ. 2, գ. 109, թթ. 82-96:

տարր: Այսպիսով, ի տարբերություն ներկա հանրապետության, որն այդ հարցում աչքի է ընկնում կառավարակենտրոն ու վարչապետակենտրոն կենտրոնացվածությամբ, Առաջին հանրապետությունում ռազմաստրատեգիական կառավարման մի շարք լիազորություններ և գլխավոր հրամանատարի պաշտոնը կենտրոնացված էին ռազմական գերատեսչության մեջ:

Առաջին հանրապետության ռազմաստրատեգիական կառավարման վերը բերված նկարագրի համատեքստում պետք է նկատի ունենալ, որ նախագահական և կիսանախագահական հանրապետություններում, օրինակ՝ ՌԴ-ում, գլխավոր (կամ գերագույն գլխավոր) հրամանատարն առաջնային մանդատ ունեցող նախագահներն են, որոնց ձեռքին կենտրոնացված է պաշտպանական (կամ ռազմական) լիազորությունների հիմնական մասը¹: Եվրոպական միապետություններում, օրինակ՝ Իսպանիայում, գլխավոր հրամանատարի գործառույթը վերապահված է միապետներին²: Ղասական խորհրդարանական հանրապետություններում (Հունգարիա³, Իտալիա, Շվեյցարիա⁴) վարչապետը չի համարվում գլխավոր հրամանատար, իսկ ռազմական լիազորությունների հիմնական մասը կենտրոնացված չէ կառավարությունում: Օրինակ՝ Իտալիան իր կառավարման ձևով խորհրդարանական հանրապետություն է⁵, որում գլխավոր հրամանատարը նախագահն է, ով գլխավորում է նաև Պաշտպանության գերագույն խորհրդը⁶:

Այսպիսով, Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանական կառավարման ձևում ռազմաստրատեգիական կառավարման հիմնահարցերի հետազոտությունը և դրա ընհանուր պատկերի վերհանումը, դրա համադրումը կառավարման նախագահական, կիսանախագահական, եվրոպական միապետական կառավարման ձևերում այդ հարաբերությունների կարգավորման հետ հիմք են տալիս եզրակացնելու, որ Հայաստանի արդի հանրապետությունում պաշտպանական ոլորտի ռազմաստրատեգիական կառավարման համակարգը խիստ կառավարակենտրոն բնույթ ունի, համեմատած նույնիսկ եվրոպական արդի խորհրդարանական հանրապետությունների հետ, կարող ենք համարել արտառոց իրավական կարգավորման տեսլական: Ռազմաստրատեգիական կառավարման հարաբերությունների նման կառուցակարգը պարունակում է երկրի պաշտպանության շահերին ուղղված վտանգներ:

¹ ՌԴ նախագահի ռազմական ոլորտի լիազորությունների մասին տե՛ս **Россинский Б.В.**, Административное право. – М.: Право и закон, 2001, էջ 587-595.

² Տե՛ս Конституция Испании: Коституции зарубежных стран. Сборник. - М.: издательство «Юрлитинформ», 2008, էջ 202-239:

³ Հունգարիայի կառավարման ձևը կարելի է համարել դասական խորհրդարանական հանրապետություն (Տե՛ս Конституционное (государственное) право зарубежных стран. В 4-х томах. Том 3. Отв. ред. БА. Страшун. – М.: Издательство БЕК, 1998. էջ 557):

⁴ Շվեյցարիայի կառավարման ձևի և ռազմաստրատեգիական կառավարման կարգի մասին Տե՛ս Конституционное (государственное) право зарубежных стран. В 4-х томах. Том 3. Отв. ред. БА. Страшун. – М.: Издательство БЕК, 1998. էջ 421:

⁵ Իտալիայի կառավարման ձևը սահմանված է 1947 թ. Սահմանադրությամբ (Տե՛ս Конституционное (государственное) право зарубежных стран. В 4-х томах. Том 3. Отв. ред. БА. Страшун. – М.: Издательство БЕК, 1998. էջ 260-264):

⁶ Տե՛ս Конституция Итальянской Республики принятая 22 декабря 1947 г., статья 87: Коституции зарубежных стран. Сборник. -М.: издательство «Юрлитинформ», 2008, էջ 81:

СИСТЕМА ВЫСШЕГО УПРАВЛЕНИЯ ВООРУЖЕННЫМИ СИЛАМИ И ИНСТИТУТ ВЕРХОВНОГО ГЛАВНОКОМАНДУЮЩЕГО В ПЕРВОЙ РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Ануш Сумбатян

*Соискатель кафедры теории и
истории государства и права ЕГУ*

В статье автор исследует вопросы военно-стратегического управления в Первой Республике Армения, имеющей парламентскую форму правления, сравнивает их с другими формами правления (президентская, полупрезидентская, монархия) и приходит к выводу, что военно-стратегическая система управления в современной Республике Армения отличается правительствозентризмом, и представляет собой нетипичное правовое регулирование, что таит в себе опасность для интересов обороны страны.

THE SUPERIOR MANAGEMENT SYSTEM OF THE ARMED FORCES AND THE INSTITUTION OF COMMANDER-IN-CHIEF OF THE ARMED FORCES IN THE FIRST REPUBLIC OF ARMENIA

Anush Sumbatyan

*Applicant of the YSU Chair of Theory and
History of State and Law*

In the article, the author raises the issues of military-strategic management in the parliamentary system of the First Republic of Armenia comparing them with the regulation of such relations in other forms of government (presidential, semi-presidential, parliamentary and monarchic). The author concludes that in the modern Republic of Armenia, the military-strategic management system of the defense sector, which has a strict Government and Prime Minister-centered feature which a vision of unusual regulation and threatens the defense interests of the country.

Բանալի բառեր – ռազմական կառավարում, զինված ուժեր, գլխավոր հրամանատար, կառավարման ձև, վարչապետ, անվտանգության խորհուրդ, նախագահ:

Ключевые слова – военное управление, вооружённые силы, главнокомандующий, форма руководства, премьер-министр, совет безопасности, президент.

Key Words – military management, armed forces, commander-in-chief, form of management, prime minister, security council, president.